ՍՏԵՓԱՆ ԿԵՐՏՈՂ

ՀՐԵԱՆԵՐԻ՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍՈՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՇՈՒՐՋ

ԺԸ-ԺԹ. դդ. Ռուսաստանի հրեաների կողմից Հայ առաքելական եկեղեցու ծեսով քրիստոնեության հավատ ընդունելու խնդիրը գործնականում հետազոտված չէ:

Լինելով հինավուրց ժողովուրդների ներկայացուցիչներ՝ հայերը եւ հրեաները ապրել են հարեւանությամբ, եւ նրանց ճանապարհները հաճախ հատվել են տնտեսության տարբեր ասպարեզներում:

Միջին դարերում հրեաները հայերի հետ ապրում էին կողք-կողքի, սահմանակից տարածքներում, հարստացնելով Կիլիկյան հայկական պետության տնտեսական հիմքերը: Ավելի ուշ ժամանակներում հայերը եւ հրեաները բնակվել են Վին Նախիջեւանում, Թիֆլիսում, Բաքվում, Լվովում եւ այլ քաղաքներում ու վայրերում: Դրա հետ մեկտեղ, լինելով տարբեր հավատքների՝ հուդայականության եւ քրիստոնեության ներկայացուցիչներ հրեաներն ու հայերը ապրում էին ինքնավար, յուրաքանչյուրը նեղ եւ սահմանափակ կրոնաէթնիկական տարածքում, նրանց միջեւ կարծես գոյություն ուներ փոխհարաբերությունների սահմանափակում:

Տեղին է ընդգծել, որ հայերը մեկընդմիշտ հեռու են մնացել հակահրեական քարոզչությունից եւ ոչինչ չեն արել ի վնաս հրեաների: Եւ ակամայից զարմանում ես կարդալով Իսրայելում 1991թ. հրատարակված «Կովկասում հրեաների պատմությունը» երկհատորանոց աշխատանքը, որի հեղինակն է պրոֆեսոր Իցխակ Դավիդը:

Առաջին հատորի 278 էջում հեղինակը գրում է. «Անհրաժեշտ է ընդգծել, որ Հարավային Դաղստանի եւ Ադրբեջանի շատ գյուղերի (Մոջո, Նուխի, Վարդաշենի) ազգաբնակչությունը խառնակազմ էր՝ այստեղ ապրում էին թաթարներ, հայեր, հրեաներ: Հայերը, հրեաների նման (Նուխի, Գուսարլի), նեղվում էին մահմեդական թաթարների ճնշումներից: Բացի այդ հայ - հրեական հարաբերությունները շատ լարված էին: Հաճախ տեղի էին ունենում արյունալից ծիսական զրպարտություններ, որոնք դրդվում էին տեղի հայ հոգեւորականության կողմից՝ ընդդեմ հրեաների»[1]:

1870 թ. Կովկասով ճանապարհորդում էր Փարիզի Ասիական ընկերության անդամ հրեա Գ. Չյորնին, որն իր ձեռքին ուներ Տիեզերական հույն պատրիարք Գեորգիի ուղերձը հույն ժողովրդին, որի մեջ նա նախատում էր հույներին նրանց այն կասկածանքի համար, որ հրեաները ծեսի ժամանակ օգտագործել են քրիստոնյա երեխաների արյունը:

Իր ճանապարհորդության ժամանակ, ցանկանալով հայտնաբերել հրեական հին ձեռագրերը, Գ. Չյորնին այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ 1870 թ. օգոստոսին ընդունվեց Ամենայն Հայոց Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի կողմից: Ընդունելության ժամանակ Գ. Չյորնին Վեհափառից խնդրեց հույն պատրիարքի նման կոն-

1 **И.Давид**, *История евреев на Кавказе,изд. «Кавкасиони”,* 1991, с. 278.

դակով դիմել իր հոտին[2]: Գեորգ Դ. զարմացավ նման խնդրանքից, այնուամենայնիվ նա 1870 թ. օգոստոսի 16-ին հռչակեց իր թիվ 272 կոնդակը, որում չթաքցված զարմանքով գրում էր Գ. Չյորնիի խնդրանքի մասին: Որ նա «...խնդիր հայցուածոյ. զի ընդհանրական նամակաւ առ մեր ազգեացն հրաման հատուցեմք նոցա զգուշանալ ի նեղելոց եւ մի հալածելոց զազգին Հրէից: Առ որ տուաք մեք զպատշաճականն պատասխանի, թէ որով հեստեւ ազգս մեր առ հասարակ պինդ ունենալով զԱւետարանին սրբոյ վարդապետութիւնս՝ պարտ անձին ծանուցեալ է միշտ եւ ճանաչէ մի՛ զոք խօսել, եւ մի՛ զոք զրպարտել, այլ մանաւանդ բարի աւանդել ամենեցուն եւ ամ[ենայն] մարդկան անիտրաբար ապաքէն գործ մի տարատիպ վարկանիմք հրատարակել առ նա զայդմանէ առանձինն ինչ պատուէր հրամանի»[3]:

Այնուամենայնիվ, ԺԹ. դ. երկրորդ կեսից սկսած Ռուսական կայսրության մեջ երկու ժողովուրդների փոխհարաբերություններն ավելի աշխուժացան: Հուդահավատք հրեաները օգնություն ստանալու նպատակով դիմեցին հին քրիստոնեական Հայ Առաքելական Եկեղեցուն (այն ժամանակ ռուս կառավարող օղակների կողմից սխալմամբ անվանված Հայ լուսավորչական՝ գրիգորյանական եկեղեցի), սկզբից մի քանի հրեա, իսկ հետո՝ հարյուրավորներ, որոնց նպատակն էր թողնել հուդայական հավատքը եւ ընդունել Հայ Եկեղեցու դավանանքը եւ մկրտվել Հայ Եկեղեցու ծեսով:

1999 թ. Վ.Միքայելյանի հրատարակած «Ինչու եւ ինչպես ռուսական հրեաներն ընդունում էին քրիստոնեությունը հայկական ծեսով (1910-1915 թթ.)» գրքույկում, հիմնվելով Ռուսաստանի Պետական Կենտրոնական Պատմական արխիվի նյութերի վրա, Ռուսաստանի հրեաների անցումը Հայաստանյայց Եկեղեցու գիրկը սահմանափակում է 1910- 1915 թվականներով[4]: Դա ոչ լիարժեք տեսակետ է: 1988 - 2002թթ. Հայաստանի արխիվներն ուսումնասիրելիս, մենք հայտնաբերել ենք փաստաթղթեր, որոնք վկայում են, որ հրեաների՝ Հայ Եկեղեցու ծեսով մկրտվել ցանկացողների առաջին դեպքերից մեկը տեղի է ունեցել 1874 թվականին: Այդ տարվա փետրվարի 18-ին Երեւանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի բնակիչ հրեա Իսմայիլ Այվազյանը խնդրանքով դիմել է Երեւանի թեմական կոնսիստորիային՝ խնդրելով իրեն մկրտել «հայ հավատքի ծեսով»: Այդ դիմումը բավարարվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից[5]:

Ռուսաստանում բնակվող ազգություններից միակը հրեաներն էին, որոնց բնակության վայրն ինքնուրույն ընտրելու իրավունքը սահմանափակ էր: Այդ մասին առաջին անգամ հիշատակվել է 1791թ. դեկտեմբերի 23-ին, Եկատերինա II կայսրուհու հրամանագրում, եւ որոշվել էր Ռուսական պետության տարածքի այն մասը, ուր թույլատրվում էր հրեաների մշտական բնակությունը:

Հուդայադավան հրեաներին Ռուսական կայսրությունը թույլ չէր տալիս արեւմտյան մարզերից տեղափոխվել Կովկաս, այսինքն՝ նստակեցության տարածքից դուրս, ինչը

2 Տե՛ս անդ, հ. 2, էջ 109:

3 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 57, գ. 16, թ. 16:

4 Տե՛ս **В.Микаелян,** *Почему и как российские евреи принимали христианство по армянскому обряду (1910-1915гг.)*, Ер., Наири, էջ 77:.

5 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 6434, թ.1:

նրանց համար առիթներից մեկը դարձավ քրիստոնեությունը Հայ Եկեղեցու ծեսով ընդունելու համար:

Ռուս Ուղղափառ եկեղեցին չէր խրախուսում եւ հաճախ խոչընդոտներ էր ստեղծում, որպեսզի հրեաները ուղղափառություն չընդունեն եւ վերջիններն իրենց հայացքներն ուղղեցին դեպի Հայ Առաքելական Եկեղեցի:

1889 թ. հոկտեմբերի 18-ին Վրաստանի հայկական թեմական կոնսիստորիային դիմեց Թիֆլիսում բնակվող հրեա Աննա Գոբզովան՝ խնդրելով իրեն մկրտել Հայ Եկեղեցու ծեսով: Նույն տարվա նոյեմբերի 1-ին թեմական կոնսիստորիան Ա. Գոբզովային մկրտելու վերաբերյալ թույլտվություն ստանալու համար դիմեց Ս. Էջմիածնի սինոդին, որն իր հերթին 1889 թ. դեկտեմբերի 27-ին թույլտվության համար դիմեց Կովկասի կառավարչապետի քաղաքացիական մաս: Ծանր հիվանդության պատճառով 1890 թ. նա մկրտվեց Հայ Եկեղեցու ծեսով[6]:

1891 թ. հունիսի 19-ին Վիրահայության թեմական կոնսիստորիային դիմեց Մոգիլեյան նահանգի Շկլով գյուղի բնակչուհի Զելդա Յանկիլի Ռուտինշտեյնը, որը ցանկանում էր «ընդունել հայ - լուսավորչական հավատք եւ մկրտվել Հայ - լուսավորչական Եկեղեցու ծեսով: Սրա հետ ուղարկվում է նոտարական վկայական, որի համաձայն նա չի պատկանում ուղղափառ հավատքին»[7]: 1891 թ. հուլիսի 1-ին Զ. Յ. Ռուտինշտեյնն ընդունվեց Հայաստանյայց Եկեղեցու ծոցը:

1893թ. մայիսին Ս. Էջմիածնի Սինոդին դիմեց Շամախիի թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը՝ խնդրելով թույլատրել Բաքու քաղաքի բնակիչ 26-ամյա հրեուհի Մարիա Սանդլերին ընդունել Հայ Եկեղեցու գիրկը՝ նշելով, որ Մ. Սանդլերը «ինքնուրոյն, կամառոր եւ հոգու ցանկութեամբ» է ընդունում Հայաստանյայց Եկեղեցու դավանանքը[8]: Նույն թվականի նոյեմբերի 25-ին Կովկասի կառավարչապետի քաղաքացիական մասով օգնականը թույլատրեց Մ. Սանդլերին մկրտվել Հայ Եկեղեցու ծեսով:

1893 թ. մայիսի 12-ին Վիրահայության թեմական կոնսիստորիային դիմեց Բաքվում բնակվող, Օդեսա քաղաքի պատվավոր քաղաքացի հրեա Էմանուել Սողոմոնի Լեւենսոնը. «Ներքին համոզմունքով հուդայությունից անցնել Հայ-լուսավորչական Եկեղեցու ծոցը»: Իր խնդրանքի հետ միասին նա ներկայացրեց «12 մարդկանց եւ նոտարի կողմից կնքված վկայական այն մասին, որ ինքը մինչեւ այժմ ոչ մի եկեղեցում չի մկրտվել»[9]:

1893 թ. նոյեմբերի 5-ին Կովկասի կառավարչապետի քաղաքացիական մասով օգնականը թույլատրեց Է. Լեւենսոնին, իր ցանկության համաձայն, հուդայությունից անցնել Հայ Եկեղեցու դավանանքին:

Ներքին Խաթունարխ գյուղում ապրող հրեա վերաբնակիչ Ռահիմ Սահակյանը 1893 թ. հունիսի 15-ին Էջմիածնի Հայ լուսավորչական սինոդին իր խնդրագրում մասնավորապես գրում էր. «Երկար ժամանակ ապրելով հայկական գյուղերում եւ հետաքրքրվելով նրանց հավատքով եւ եկեղեցական ծեսերով՝ այդ հավատքն ինձ շատ դուր եկավ:

6 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 8562, թ. 3:
7 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 8710, թ. 1-5:
8 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 8885, թ. 1-6:
9 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 8891, թ. 1-2:

Եւ իրականում նա պարունակում է ուղղահավատք եւ շատ ժամանակ է հատկացնում ապաշխարանքին՝ մեղքերի թողությանը, ինչպես նաեւ հավերժ երանելի կյանքի ժառանգությանը: Ես, որպես գրագետ, կարող եմ կարդալ այլ գրքերի թվում նաեւ հայոց գրքեր եւ Կտակարանը:

Եւ այս խնդրագրով դիմելով Սրբազան Սինոդին՝ խոնարհաբար խնդրում եմ ընդունել ինձ Հայ-լուսավորչական հավատքին, ցողել ինձ սուրբ կնքավազանում Հայաստանյայց Եկեղեցու ծեսով՝ գրանցելով ինձ Հայ Եկեղեցու ծոցը, ուր ես ազատ կերպով կարողանամ խոնարհվել հայոց հավատքին»[10]: 1893 թ. նոյեմբերի 29-ին Կովկասի կառավարչապետի քաղաքացիական մասի օգնականը թույլատրեց Ռահիմ Սահակյանին ընդունել Հայ լուսավորչական դավանանքը:

1893 թ. օգոստոսի 27-ին Աստրախանի թեմական կոնսիստորիան դիմեց Սուրբ Էջմիածնի սինոդին՝ խնդրելով թույլատրել Մոսկվայի քաղաքացի օրիորդ, «հրեուհի Մովսեսյան հավատքի» Սառա Ռոզենտալին մկրտել եւ ընդունել Հայ Եկեղեցու ծոցը: Իր խնդրանքին կից կոնսիստորիան ներկայացրեց Ս. Ռոզենտալի ծննդյան վկայականը՝ կնքված Մոսկվայի հասարակական ռաբբի Զ. Կ. Մինորի կողմից: 1897թ. հունվարի 31-ին Ս. Ռոզենտալը մտավ Հայաստանյայց Եկեղեցու ծոցը[11]:

Հատուկ հետաքրքրություն ունի 1894 թ. ապրիլի 3-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցուն՝ Տավրիկյան նահանգի Մելիտոպոլ քաղաքի բնակիչ հրեա Մոիսեյ Բորիսովիչի՝ Հայոց Եկեղեցու ծոցն անցնելու խնդրանքը: Դրա հեղինակն էր Թալմուդի հուդայադավանության եւ այլ հոգեւոր գրականությունը խոր իմացող մի անձնավորություն: Ամբողջ խնդրագիրը լեցուն էր սուրբ գրքերից վերցրած հատվածներով եւ արտահայտություններով: Նա մասնավորապես գրում էր. «Հուդայական ազգի նախնի, դաստիարակված խիստ կրոնական հոգով, հիմնովին ուսումնասիրելով հուդայության հիմնադրույթը, միտքվելով Աստվածաշնչի, Թալմուդի եւ Առաքյալների ուսման մեջ եւ, վերջապես, ուսումնասիրելով Գողգոթայի փառապալի եւ Հայ լուսավորչական Եկեղեցու մեծ պատրիարքների ուսմունքը, ես մեծ խնդրանքով դիմում եմ Ձերդ Վեհափառությանը՝ ընդունել ինձ Ձեր Եկեղեցու ծոցը»: Մ. Բորիսովիչը իր ցանկությունը բացատրում էր այն բանով, որ վերջինս «Երկրագնդի բոլոր եկեղեցիների պատմական առաջնորդն է, նա, որը շրջապատված է Նազարեթից ուղղված փառապանքի ճաճանչապսակով..., նա, որը թագավորում է արեւելքի ծայրամասում, մարդկության համար փառապալի օրրանի մոտ, նա, որը ընդունեց Սուրբ Հոգին հենց սկզբնաղբյուրի մոտ: Սա Մեծ Եկեղեցի է, որն իր հետեւից չի թողել արյան հոսքեր»: Վերջապես Մ. Բորիսովիչի՝ Հայ Եկեղեցու ծոցն անցնելու ցանկությանը նպաստել էր, «...այն բարերար ազդեցությունը, որն իր վրա թողել էին Տավրիկյան նահանգի Մելիտոպոլ քաղաքի հարգալից Սրապիոն քահանա Սամվելյանի գերազանց ճառերը»[12]:

1895 թ. հուլիսի 1-ին Ռուսական կայսրության ներքին գործոց նախարարի տե-

10 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 8907, թ. 1:
11 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 8921, թ. 1-3:
12 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 9067, թ. 1-7:

ղակալը, հիմնվելով Օրենքների հավաքածուի XI հատորի 1-ին մասի 159-րդ հոդվածի համ. 1 առդիրի վրա, թույլատրեց հրեուհի Դոբա Յանկելի Բերշադսկայային ընդունել Ս. Մկրտություն ըստ Հայ լուսավորչական ծեսի: Օդեսայի նոտարի տված եւ երեք վկաների կողմից ստորագրված վկայագրերի մեջ ասված էր, որ Դ. Յ. Բերշադսկայան պատկանում է հուդայական դավանանքին եւ առաջներում չի ընդունել Քրիստոնյա ոչ մի այլ դավանանք եւ մկրտություն[13]:

1894 թ. Ռուսաստանի կայսրության ելեմտից նախարար Ս. Յ. Վիտտեն գինու մենաշնորհի օրենք ընդունեց, որի համաձայն վերացվում էր կապալային համակարգը: Սպիրտի եւ ալկոհոլային արտադրանքի վաճառքը դարձավ բացառապես պետության մենաշնորհը, այսինքն՝ մտցվում էր այսպես կոչված «խմիչքների պետական վաճառք»: 1888 թվականին մասնավոր գինետները փոխարինվեցին գինու պետական կրպակներով, ինչը պետության բյուջեին բերեց լուրջ օգուտներ: Սրա հետ մեկտեղ կայսրության արեւմտյան նահանգներում, որտեղ բնակվում էին մեծ թվով հրեաներ, որոնց մի զգալի մասն անմիջականորեն զբաղվում էր գինու արտադրությամբ, ուներ պանդոկներ, ցորենի պահեստներ եւ այլն, զրկվեց գոյության միջոցներից: Բարեփոխումների հետեւանքով սնանկացածների թիվը մի քանի տասնյակ հազարից հասնում էր հարյուր հազար հրեաների[14]:

Խմիչքի մասնավոր արտադրությունը փակելով՝ կառավարությունը չմտածեց հրեաների նկատմամբ վերացնել օրենսդրական սահմանափակումները, որոնք խոչընդոտում էին հրեաներին ձեռք բերելու ավելի շահավետ մասնագիտություններ: Զրկվելով գյուղական պանդոկներում աշխատելու հնարավորությունից՝ հրեաները մեկնեցին քաղաքներ՝ ապօրինի անցնելով նստակեցության սահմանը: Այս ամենը նպաստում էր այն բանին, որ հրեաները քրիստոնեություն ընդունեն՝ իրենց գոյությունն անվտանգ դարձնելու եւ ապահով գոյատեւելու համար:

Նկատի ունենալով ապօրինի նստակեցության սահմանահատումը՝ 1899 թ. հունվարի 22-ին Մոսկվայի գեներալ-նահանգապետ Մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչի ճնշման տակ ընդունվեց օրենք, որը սահմանափակում էր 1-ին կարգի հրեա-վաճառականների իրավունքները՝ ընդունվել Մոսկվայի վաճառականության (կուպեցների Ս.Կ.) շարքերը: Նման սահմանափակումները նպաստեցին այն բանին, որ հրեաների մի մասը, հասցնելով բնակություն հաստատել Ռուսաստանի կենտրոնական շրջաններում՝ այդ թվում նաեւ Մոսկվայում, թափանցեց Ռուսաստանի հարավային շրջաններ, հատկապես Կովկաս, որտեղ Բաքվում եւ Թիֆլիսում, հաջողությամբ սկսեց զբաղվել ձեռնարկատիրությամբ: 1899-ի նոյեմբերի 5-ին Կերչ քաղաքի նախկին բնակչուհի հրեուհի Ռախիլ Ֆինգերութը, որը բնակություն էր հաստատել Դերբենտում, գրավոր խնդրանքով դիմեց հայ քահանա Սպանդունուն՝ խնդրելով ընդունել իրեն «Հայ լուսավորչական Եկեղեցու ծոցը»: Շամախիի թեմական կոնսիստորիայի առջեւ միջնորդի դերում էին ազնվա-

13 Անդ:

14 Տե՛ս **А. Б. Миндлин,** *Политика С.Ю.Витте по “еврейскому вопросу”:* “Вопросы истории”, 2004, № 4, էջ 120-125:

կաններ Միքայել Հովսեփի Ավշարովը եւ Անդրեյ Գրիգորեւը: 1900 թ. հունվարի 2-ին Ռ. Ֆինգերութն ընդունեց սուրբ մկրտություն՝ ըստ Հայ Եկեղեցու ծեսի[15]:

1900 թ. նոյեմբերի 20-ին Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական կոնսիստորիայի նախանդամ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանը դիմելով Ս. Էջմիածնի սինոդին հայտնել է, որ Մոսկվայի հայոց հոգեւոր կառավարությանը դիմել է հրեա դեղագործ Յակով Զելիկի Լեմպիրտը եւ խնդրել, որ իրեն ընդունեն քրիստոնեության հավատքին եւ նաեւ այդ խնդրով միջնորդել հոգեւոր բարձր իշխանության առաջ: Իր դիմումին կցված էին ա) Ռաբիի կոնսիստորիայի միջնորդագիրը, բ) Խարկովի Ռաբիի կողմից տրված ծննդյան վկայականը, գ) դեղագործի վկայականը եւ համալսարանի ավարտական վկայականը, դ) տեղեկանք այն մասին, որ նա չի պատկանում որեւիցե այլ քրիստոնեական եկեղեցու, ինչպես նաեւ՝ հայ քահանայի կողմից տրված տեղեկանք, որ Յակով Լեմպիրտը գիտի Ավետարանը եւ քննություն է հանձնել Հայ Եկեղեցու դավանանքի բավարար իմացության համար[16]:

1901թ. հուլիսի 28-ին Օդեսայի 24-ամյա հրեուհի Կլարա Խայա Գրինշտեյնը խնդրում էր մկրտել իրեն Հայ եկեղեցու ծեսով:

Քրիստոնյա հավատքի մասին ունեցած նրա գիտելիքներն ընդունեց Օդեսայի ծխատեր Գրիգոր քահանա Խորասանջյանը, որից հետո 1901 թ. սեպտեմբերի 10-ին Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական կոնսիստորիան Ս. Էջմիածնի սինոդից խնդրեց Կ. Խ. Գրինշտեյնին մկրտել ըստ Հայ Եկեղեցու ծեսի: 1901 թ. նոյեմբերի 7-ին Ռուսական կայսրության ներքին գործերի նախարարության հոգեւոր գործերի դեպարտամենտը թույլատրեց «կատարել հիվանդ հրեուհու մկրտությունն ըստ Հայ լուսավորչական Եկեղեցու օրենքների»[17]:

1902 թ. հուլիսի 7-ին ռուսական վաճառականի դուստր հրեուհի Ռոզա Մոիսեի Տրեմբիցինան, որը բնակվում էր Թիֆլիսում, նույնպիսի խնդրանքով դիմեց Վրաց-իմերեթական հայոց թեմական կոնսիստորիային՝ հայտնելով, որ ինքը «Թիֆլիսի Սարգիս քահանա Շիրյանցի հովանու ներքո սովորել է Հայ Եկեղեցու ծեսերը եւ աղոթքները»[18]: 1903թ. հուլիսի 10-ին Կովկասի կառավարչապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտոնակատարը թույլատրեց հուդայադավան Ռ. Մ. Տրեմբիցինային ընդունել մկրտություն՝ ըստ Հայ լուսավորչական Եկեղեցու ծեսի:

1902 թ. ապրիլի 26-ին Սանկտ Պետերբուրգից Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսին դիմեց հրեա ինժեներ Ռեյզենը, որը խնդրում էր թույլատրել իրեն ընդունել մկրտություն Հայ Եկեղեցու ծեսով: Նույն թվականի հուլիսի 19-ին ներքին գործոց նախարարության հոգեւոր գործերի արտասահմանյան դավանանքների դեպարտամենտը թույլատրեց Ռեյզենին ընդունել մկրտություն, սակայն ընդգծեց, որ առաջարկում է «Սինոդին անհ-

15 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ.9667, թ. 2-3:
16 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 9730, թ. 1:
17 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 9931, թ. 2-6:
18 Անդ:

բաժեշտ հսկողություն սահմանել, որպեսզի ճիշտ կատարվեն հրեաներին մկրտելու գործող բոլոր սահմանված կարգերը»[19]:

1902 թ. օգոստոսի 20-ին Շամախիի հայկական թեմական կոնսիստորիայի առաջարկությամբ հրեուհի Զիսլա Ռավինի Ֆայլը յուրացրել էր Հայ Եկեղեցու դավանանքը: Նույն թվականի դեկտեմբերի 5-ին Կովկասի Կառավարչապետի քաղաքացիական մասի օգնականը թույլատրեց Բաքվում ապրող Դերբենտ քաղաքի բնակչուհի հուդայադավան հրեուհի Զ. Ֆայլին մկրտել Հայ եկեղեցու ծեսով[20]:

1898-1901թթ. Նիկոլայ Երկրորդ կայսրը անհանգստացած էր հրեաների՝ նստակեցության սահմանազծից դուրս հողատարածքներ ձեռք բերելու խնդրով: Այդ հարցում պարզություն մտցնելու նպատակով նա ներքին գործոց նախարար Դ.Ս.Սիպյագինին հանձնարարեց մշակել օրենքի նախագիծ, որն ուղղված լիներ նման միտումների դեմ՝ տեղերում արգելելով հրեաներին գնել կամ վարձակալել եւ գրավ ընդունել անշարժ գույք:

Տեղի իշխանությունը որպես բացառություն թույլատրում էր գերեզմանների, աղոթատների եւ արդյունաբերական մասնաշենքերի կազմակերպումը միայն սահմանափակ հողատարածքների վրա: Սակայն այս կտրուկ հակահրեական քայլերը ոչ մի զգալի արդյունք չունեցան: Այնուամենայնիվ հրատարակվեց «Նահանգներում, որոնք չեն մտնում հրեաների նստակեցության սահմանների մեջ, ժամանակավորապես արգելել կնքել որեւէ կայքագրական վկայագիր» օրենքը, որը ցարը վավերացրեց 1903 թ. մայիսի 10-ին: Խոսքն այն վկայագրերի մասին էր, որոնք կապված էին գյուղական վայրերում գտնվող անշարժ գույքին տիրանալու եւ օգտագործելու սեփականության իրավունքի հետ[21]:

1903 թ. հուլիսի 6-ին ներքին գործոց նախարարի տեղակալը թույլատրեց Օդեսայի բնակչուհի Ֆրեյդա Գերշոնի Սոսկինային, ըստ իր՝ մայիսի 21-ի խնդրանքի եւ Հայ Եկեղեցու սինոդի միջնորդության, ընդունել Սուրբ Մկրտություն Հայ Եկեղեցու ծեսով[22]:

Հայ Եկեղեցու՝ Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցու քահանա Գրիգոր Տեր- Գրիգորյանի կողմից հրեուհի Խայա- Սառա Պերեպլետչիկովային տված վկայականում գրված էր հետեւյալը. «Սրանով վկայում եմ, որ Հայ լուսավորչական ծեսով մկրտվել ցանկացող Խայա - Սառա Դավիդի Պերեպլետչիկովան իմ ղեկավարության ներքո այնքան լավ է սովորել Հայ լուսավորչական Եկեղեցու դավանանքը, որ կարելի է նրան պատրաստ համարել ընդունելու Սուրբ Մկրտություն»[23]: 1903 թ. նոյեմբերի 5-ին ներքին գործոց նախարարի տեղակալը բավարարեց Խ. Պերեպլետչիկովայի խնդրանքը:

Ելնելով այն բանից, որ ռուս հեղափոխականների մեջ շատ էին հրեաներ, իշխանություններն ավելի էին ուժեղացնում նրանց վրա իրենց ճնշումը, ավելի շատ էին սահմանափակում նրանց իրավունքները: 1903թ. դեկտեմբերի 2-ին Նիկոլայ II կայսրի հրամա-

19 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 9909, թ. 6, 12:
20 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 9955, թ. 2-7:
21 Տե՛ս **Миндлин А. Б.,** *Политика С.Ю.Витте по "еврейскому вопросу"*, էջ 123:
22 Տե՛ս ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 10046, թ. 8:
23 ՀԱԱ ֆ. 56, ց. 1, գ. 10012, թ. 3-4:

նագրի համաձայն՝ Կառավարող սրբազնագույն սինոդն իր նիստում լսեց օբեր-պրոկուրորին եւ ներքին գործոց նախարարի խնդրանքով կարգադրեց հոգեւոր գերատեսչությանը՝ թույլ չտալ մկրտել հրեաներին նստակեցության սահմանագլխից դուրս, առանց այնտեղ ապրելու իրավունք ունենալու: Ներքին գործոց նախարարությունը Կառավարող սրբազնագույն սինոդին ուղղեց մի գրություն, որի մեջ ասված էր, որ ներքին գործոց նախարարությունը շրջաբերական կարգադրություն է արել հռոմեա-կաթոլիկական, լյութերական եւ բարենորոգչական-ավետարանչական եկեղեցիներին, որպեսզի նրանց հոգեւոր պետերը նստակեցության գծից դուրս ապրող եւ մկրտվել ցանկացող հրեաներից, եկեղեցական վեց ծիսակարգերն իմանալուց բացի, պահանջի տեղի ոստիկանությունից վկայական այն մասին, որ նրանք իրավունք ունեն բնակվելու տվյալ վայրում, ընդ որում այն հրեաները, որոնք չեն ներկայացնի նշված վկայականները, մկրտվելու համար պետք է թույլտվություն ստանան իրենց գրանցման վայրերում: Հայտնելով որ ներքին գործոց նախարարությունը խնդրում էր սինոդի օբեր - պրոկուրորին տեղեկացնել, թե արդյոք հնարավոր չի լինի նույնատիպ կարգադրություն անել նաեւ այն հրեաների համար, որոնք ցանկություն են հայտնել ընդունել ուղղափառություն: Քննարկելով Ներքին գործոց նախարարության վերոնշյալ կարգադրությունը՝ սինոդը որոշեց. «... գրավոր կարգադրել սինոդական գրասենյակներին եւ թեմական առաջնորդներին, որպեսզի նրանք, շրջաբերական հրամաններ արձակելով, իրենց ենթակա հոգեւորականությանը կարգադրեն, նստակեցության սահմաններից դուրս ապրող հրեաներին թույլ չտալ ընդունել Ս. Մկրտություն, առանց նախապես ներկայացրած տեղի ոստիկանության վկայագրի, որ Ս. Մկրտություն ընդունողն իրավունք ունի ապրելու նստակեցության սահմաններից դուրս, ընդ որում այն հրեաները, որոնք չեն ներկայացնում նման վկայագրեր, պետք է հայտարարվի որ նրանք մկրտվելու թույլատվություն կստանան միայն իրենց գրանցման վայրերում»[24]:

Այնուամենայնիվ, հրեաները շարունակում էին անցնել Հայաստանյայց Եկեղեցու գիրկը:

1904 թ. հունիսի 9-ին Ս. Էջմիածնի սինոդը ներքին գործոց նախարարությունից խնդրում էր թույլատրել Օդեսայում ապրող Ժիտոմիրի գավառի Զուդնովո գյուղի բնակչուհի հրեուհի Սառա-Աիդա Ֆայնբերգին, իր խնդրանքի համաձայն, մկրտել Հայ Եկեղեցու դավանանքով: Գրության հետ ներկայացվում էր. 1. Ս. Ա. Ֆայնբերգի խնդրագիրը; 2. Ժիտոմիրի գավառի Զուդնովենսկի տեղամասի ռաբբիի կողմից 1883 թ. օգոստոսի 18-ի թ. 84 չափաբերական մատյանից Ֆայնբերգին տրված ծննդյան տեղեկանքի պատճենը; 3. Օդեսայի Հայոց եկեղեցու ավագ Գրիգոր Խորասանջյանի զեկուցագիրը՝ Ս. Ա. Ֆայնբերգի կողմից Հայ եկեղեցու դավանանքին ծանոթանալու եւ սովորելու մասին: 1884 թ. հունիսի 22-ին Ներքին գործոց նախարարությունը թույլատրեց Ֆայնբերգին ընդունել մկրտություն Հայ Եկեղեցու ծեսով[25]:

24 ՀԱԱ, ֆ 56, ց. 1, գ. 10303, թ. 7:
25 Տե՛ս ՀԱԱ, ֆ 56, ց. 1, գ. 10144, թ. 1-11:

Վիրահայության թեմական կոնսիստորիայի աջակցությամբ եւ Ս. Էջմիածնի սինոդի կողմից ներկայացված դիմումի համաձայն՝ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ Ֆրեզեն 1903 թ. հուլիսի 4-ին թույլատրեց Թիֆլիսում ապրող Ժիտոմիր քաղաքի բնակչուհի հուդայադավան Յեսե Գավրիլի Գիվերմանին մկրտություն ընդունել Հայ Եկեղեցու ծեսով[26]:

1904 թ. մայիսի 13-ին Թիֆլիսում ազգականներից գաղտնի հրեուհի Զելդա Բենիամինի Լեւինան դիմեց Վիրահայոց թեմական կոնսիստորիային՝ խնդրելով իրեն մկրտել Հայ Եկեղեցու ծեսով: 1904 թ. հուլիսի 24-ին Ս. Էջմիածնի սինոդին ուղղված իր նամակում նա գրում էր, որ իր ցանկության մասին իմացել են ծնողները եւ «հիմա ես հանգիստ չունեմ իմ հարազատների եւ ծանոթների սպառնալիքներից եւ հորդորներից, որոնք մտածում են, որ կարող են ստիպել ինձ հրաժարվել քրիստոնյա դառնալուց: Իհարկե, դա իրենց չի հաջողվի, որովհետեւ այդ իմ ցանկությունը եղել է մտածված, հիմնավորված եւ լիարժեք գիտակցված, եւ իմ հավատակիցներն ինձ պատճառում են սոսկ բարոյական ցավ, որը շարունակվելու է մինչեւ իմ կողմից քրիստոնեություն ընդունելու պահը»[27]: 1904 թ. հուլիսին Ս. Էջմիածնի սինոդին գրավոր դիմեց Թիֆլիսի Ս. Նշան եկեղեցու ծիսատեր Գրիգոր քահանա Շերմազյանը այն մասին, որ Հայ Եկեղեցու ծեսով մկրտվելու ցանկություն հայտնած հրեուհի Զեյդա Լեւինան սովորել է Հայ Եկեղեցու եւ քրիստոնեության ծեսերը: 1904 թ. օգոստոսի 13-ին Կովկասի քաղաքացիական մասի Կառավարչապետը Զ. Լեւինային թույլատրեց քրիստոնեություն ընդունել ըստ Հայ Եկեղեցու դավանանքի[28]:

Ինչպես երեւում է արխիվային փաստաթղթերից, հրեաներից շատերը քրիստոնեություն ընդունում էին անկեղծ եւ գիտակցաբար:

1904 թ. հուլիսի 5-ին ներքին գործոց նախարարը Կովկասի կառավարչապետին նամակ ուղղեց, որում ասված էր, որ 1904թ. ապրիլի 19-ին Պետական խորհրդի կողմից Նիկոլայ II-ին ներկայացվեց տեսակետ, որի հիման վրա անձանց անցումը մի քրիստոնեական դավանանքից մյուսը թույլատրվում էր նահանգապետների կողմից: Ցանկացողները պետք է ներկայացնեին երկու վկաների կողմից տրված տեղեկանք, որ նրանք ուղղափառություն ընդունած չեն, ինչպես նաեւ ծննդյան եւ մկրտության մասին վկայություններ: Կարծիքի 5-րդ կետում բերվում էր քրիստոնեական դավանանքների ցուցակը՝ հռոմեա-կաթոլիկական, հայ-կաթոլիկական, հայ-լուսավորչական, ավետարանչական, լյութերական եւ այլն[29]: Ներքին գործոց նախարարության այս հրահանգին էին ենթարկվում նաեւ հրեաները:

1904 թ. օգոստոսի 3-ին Շամախիի հայոց թեմական կոնսիստորիա խնդրանքով դիմեց Կիեւի գավառի Ռժիցեւ փեղամասի բնիկ հրեուհի Խասյա Նեխամա Իուկի Գիրշիկը՝ խնդրելով մկրտել իրեն Հայ Եկեղեցու ծեսով: Նրա խնդրանքը շուտով բավարարվեց[30]:

26 ՀԱԱ, ֆ 56, ց. 1, գ. 9975, թ. 9:
27 ՀԱԱ, ֆ 56, ց. 1, գ.10208, թ. 4-7:
28 Տե՛ս անդ:
29 Տե՛ս ՀԱԱ, ֆ 56, ց. 1, գ.10231, թ. 1:
30 Տե՛ս ՀԱԱ, ֆ 56, ց. 1, գ.10242, թ. 1-13:

1905 թ. փետրվարին Վրաստանի Թելավ քաղաքում ապրող Ելիզավետգրադի բնակչուհի հրեուհի Սառա-Էստել Լազարի Գրիգեւսկայան դիմեց Թելավի քաղաքի Հայ եկեղեցու ծխատեր Աբել քահանա Սուքիասյանին՝ խնդրելով մկրտել իրեն Հայ Եկեղեցու ծեսով: Քահանան քննել էր նրա քրիստոնեական գիտելիքների իմացությունը: Ինչպես Ս. Գրիգեւսկային տրված վկայագրի մեջ գրել էր տեր Աբելը. «Նա խորությամբ ծանոթ է Հին եւ Նոր կտակարաններին եւ մասամբ նաեւ Հայ Եկեղեցու գլխավոր կանոններին»: Վիրահայության թեմական կոնսիստորիան եւ Ս. Էջմիածնի սինոդը Ս. Գրիգեւսկայի մկրտության թույլատվության համար դիմեցին Թիֆլիսի նահանգապետին, որը դեմ չէր, որպեսզի մկրտությունը տեղի ունենա, միայն այն դեպքում, եթե Գրիգեւսկայան, Կառավարող սինոդի 1903 թ. ապրիլի 2-ի թ. 6 որոշման համաձայն՝ սկզբում տեղի ուսուցիկանությանը ներկայացնի հրեաների նստակեցության սահմանից դուրս ապրելու թույլտվության վկայագիրը: Դա համապատասխանելու է օրենքի ուժ ստացած Կառավարող սինոդի՝ 1903 թ. դեկտեմբերի 2-ի որոշմանը:

1905 թ. հուլիսի 16-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցին (Խրիմյան Հայրիկը) կոնդակ հռչակեց Հայաստանյայց Եկեղեցու ծեսով մկրտվողների համար: Ըստ այդ կոնդակի՝ Հայ Եկեղեցու դավանանքն ընդունողները պետք է իմանային «Հայր Մեր»-ը, «Ողորմեա ինձ, Աստուած» եւ «Որպէս փափաք է եղջերու յաղբերս ջուրց» սաղմոսները, տեղյակ լինեին Հայ Եկեղեցու ծեսերին: Ինչպես նաեւ, ըստ կոնդակի, խստագույնս արգելվում էր մկրտել մկրտվածներին եւ մի դավանանքից մյուսն անցածներին[31]:

1905 թ. աշնանը Ռուսաստանի կայսրության արեւմտյան մարզերում սկսվեց հակահրեական ջարդերի ալիքը: Այդ պատճառով կտրուկ աճեց հուդայադավան հրեաների թիվը, որոնք ցանկանում էին քրիստոնեություն ընդունել: Նրանցից շատերն այդ քայլով ապահովում էին իրենց կյանքի անվտանգությունը եւ հրեաների նստակեցության սահմանից տեղափոխվելու հնարավորությունը:

1908 թ. քրիստոնեությունը Հայ Եկեղեցու ծեսով ընդունեց Աքերման քաղաքի բնակիչ Ա.Ս. Յուզեֆովիչը[32]: Ելիզավետգրադի հրեուհի Ռ. Պ. Օսեբինսկայան Ս. Մկրտությունն ընդունեց Սանկտ Պետերբուրգի Ս. Եկատերինեի հայոց եկեղեցում[33]: Մկրտության վկան էր ուսանող Ս.Օվվյանը: 1909թ. դեկտեմբերի 16-ին այս նույն եկեղեցում մկրտվեց հրեուհի Ֆ.Պ.Գրավեցը: «Ս. Մկրտության ժամանակ նա՝ Ֆեյգան, ընդունեց Նինա անունը: Վկան էր Ներսես Ներսեսի Տեր-Ներսեսովը»[34]:

1910 թ. մայիսին Սուրբ Մկրտություն ընդունեց Սանկտ Պետերբուրգի համալսարանի ուսանող Մ.Գերշանովիչը[35]:

1910 թ. սեպտեմբերի 11-ին Ներքին գործոց նախարարությունը, դիմելով բոլոր թեմական կոնսիստորիաներին, պահանջում էր, որպեսզի նրանք հրեաներին քրիստոնեա-

31 «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան. Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907թթ.)», կազմող՝ Ս. Ս. Բեհբուդեան, Երեւան, 2000, էջ 339:

32 Տե՛ս ՀԱԱ, ֆ 1389, ց. 1, գ.127, թ. 27:

33 Տե՛ս Նույն տեղում, թ. 63:

34 ՀԱԱ, ֆ. 1389, ց. 1, գ.126, թ. 76:

35 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1389, ց. 1, գ.130, թ.44:

կան եկեղեցիներում մկրտելիս ունենան նախարարության թույլտվությունը, իսկ Կովկասում՝ տեղի գլխավոր պետի թույլտվությունը: Դա նշանակում էր, որ համապատասխան ապյանը պարտավոր էր ամեն մի հրեայի նկատմամբ դրսեւորել խիստ անհատական մոտեցում:

Ներքին գործոց նախարար Պյոտր Ստոլիպինը 1910թ. նոյեմբերի 24-ին հատուկ ուղերձով համառորեն պնդում էր, որ Հայ Եկեղեցու թեմական առաջնորդները հրեաների մկրտելուն վերաբերվեն հատուկ զգուշությամբ:

1910 թ. մայիսի 8-ին եւ հունիսի 6-ին Սանկտ Պետերբուրգի Հայոց հոգեւոր կառավարությունը Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի քահանաներին հրահանգեց Հայ Եկեղեցու գիրկն ընդունվող հրեաներից պահանջել Հայ Եկեղեցու ծեսի եւ քրիստոնեական դավանության ավելի մանրազնին իմացություն, պահանջել բոլոր անհրաժեշտ վկայականները եւ հետեւել, որ մկրտությունից հետո նրանք կատարեն հայ հավատացյալի բոլոր անհրաժեշտ պարտականությունները[36]:

Նույն թվի հոկտեմբերի 2-ին Գրոդնոյի նահանգի հրեուհի Լեյբա Արոնի Ելսկին Սանկտ Պետերբուրգի հայոց հոգեւոր կառավարությունից խնդրում էր թույլատրել իրեն ընդունել Հայ Եկեղեցու «մկրտություն ըստ օրենքի եւ ծեսերի»[37]: 1910 թ. նոյեմբերի 8-ին նույնպիսի խնդրանքով դիմեց Սանկտ Պետերբուրգի բնակչուհի հրեուհի Գ.Գ. Մազալիֆը[38]:

Ինչպես արխիվային փաստաթղթերից երեւում է, ուրիշներից ավելի հաճախ նախարարության հոգեւոր գործերի դեպարտամենտին դիմում էր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի հայ լուսավորչական թեմական կոնսիստորիան: Դա բացատրվում է այն բանով, որ կոնսիստորիային ենթակա հայոց եկեղեցիները գտնվում էին այն վայրերում, որտեղ զգալի էր հրեական ազգաբնակչության թիվը, (Մոլդովա, Ուկրաինա, Ղրիմ, Եկատերինոսլավի նահանգ եւ այլն):

1910 թ. սեպտեմբերին Նոր Նախիջեւանի կոնսիստորիայի անդամ Մ. Զատիկյանը պաշտոնապես դիմեց Ներքին գործոց նախարարություն՝ խնդրելով ավելի ստույգ հրահանգներ տալ «հրեական գործի» հարցով: Նա մասնավորապես գրում էր. «Հուդայական հավատքի անձանց դիմումների մեծ հոսքի հետեւանքով, որոնք ցանկանում են անցնել Հայ լուսավորչական Եկեղեցու գիրկը, թեմական կոնսիստորիան սրանով պատիվ ունի խոնարհաբար խնդրելու ներքին գործոց նախարարությանը բացատրել ներկայիս հարցը, եւ հատկապես այն՝ արդյոք անհրաժեշտություն կա այս հարցի առնչությամբ ամեն մի խնդրողի համար առանձին դիմել նախարարությանը, թե ղեկավարվել մեկ ընդանուր կանոնով, կամ էլ հիմնվել եւս ինչ-որ օրենքների վրա»[39]:

Ս. Էջմիածնի սինոդը 1912 թ. սկզբներին պատվիրեց Երեւանի կոնսիստորիային «ճշմարտությամբ կատարել օրինաց XI հատ. 7 հոդ. հավելված կանոնների պահանջ-

36 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1389, ց. 1, գ.13, թ. 52:

37 Անդ, թ. 61:

38 Տե՛ս անդ, թ. 68:

39 **В. Микаелян,** Почему и как российские евреи принимали христианство по армянскому обряду с.7.

ները»:[40] Նույն թվականի մարտի 14-ին Սինոդը թույլատրեց մկրտել նաև Գորիս քաղաքի վերաբնակչուհի հրեուհի Ռեբեկա Այզենբերգին, «պահպանելով օրենքի բոլոր պահանջները»[41]: Կովկասի սահմաններից դուրս հրեաներին Հայ Եկեղեցու ծոցն ընդունելու թույլտվություն տալիս էր Ռուսաստանի Ներքին գործոց նախարարությունը: Այսպես, 1913 թ. ապրիլի 22-ին թ. 3981 գրությամբ ներքին գործոց նախարարը Աստրախանի հայոց թեմի կոնսիստորիային թույլատրեց Հայ Եկեղեցու ծեսով մկրտել Խարկովի վերաբնակիչ Լեյբ Սկլովսկուն եւ իր փոքրահասակ աղջկան[42]:

1914 թ. Հայ Առաքելական Եկեղեցու ծեսով մկրտություն ստանալու խնդրանքով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին դիմեցին Թիֆլիսի բնակիչ Այզեկ Գուրիսը, Վլադիկավկազի բնակիչներ Մոշե Գիրշոնը եւ Լեոնտի Մորգուլիսը, ինչպես նաև Խարկովից Ելկե Մերսոնը:[43]

Հայ Առաքելական Եկեղեցու գիրկն անցնող հրեաների թիվը 1914 թ. միանգամից աճեց, եւ դա հատկապես զգացվեց, երբ Նոր Նախիջեւանի փոխանորդությունը եւ տեղի փոխանորդ Գեւորգ վարդապետ Չորեքչյանը 1914 թ. սեպտեմբերի 15-ին դիմեցին Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանին թ. 208 հայտարարությամբ, ուր մասնավորապես նշվում էր, «որ հրեադավանների մուտքը Հայ Եկեղեցու ծոցը հայ ընտանիքի համար միայն կազմալուծող նշանակություն կարող է ունենալ, քանի որ այդպիսի դավանափոխություններ, ինչպես փորձը ցույց է տալիս, գլխավորապես կատարվում են ամուսնական հաշիվներով, որով կազմվում են ընտանիքներ, որոնց դաստիարակող սյունը՝ ընտանիքի մայրը, ո՛չ ծանոթ է ազգային սովորություններին եւ ո՛չ էլ գիտակ մայրենի լեզվին, եւ ուրեմն անընդունակ հայ ընտանիք կազմելու, որ եղել է եւ պիտի լինի հիմքը ազգային հոգու պահապան»:

Հենց այս հարցի կապակցությամբ Նոր Նախիջեւանի փոխանորդությունում գումարվել էր քահանայական ժողով, ուր մշակվել էր «Հրեությունից Հայլուսավորչական Եկեղեցու ծոցը մտնողների համար» խստապահանջ մի ծրագիր-հրահանգ:

Դավանափոխության պատրաստ հրեաները պետք է իմանային.

«Սուրբ Գրոց ուսումը». Քրիստոսի երկրավոր կյանքը: Սուրբ Կույս Մարիամի ծնունդը: Ավետումն Հովհաննես Մկրտչի: Հիսուսի ծնունդը: Տեառնընդառաջ. Հիսուսի մկրտությունն ու քարոզչությունը: Տասներկու առաքյալների ընտրությունը: Հիսուսի Հաղթական մուտքը Երուսաղեմ: Խորհրդավոր ընթրիք եւ ոտնլվա: Հիսուսի մատնությունը, չարչարանքը, խաչելությունը, թաղումը, հարությունը եւ համբարձումը: Հոգեգալուստ:

Քրիստոնեական վարդապետություն. Երեսը խաչակնքել: Աղոթքի եւ խաչակնքելու նշանակությունը: Տերունական աղոթք եւ նրա բացատրությունը: Երեքսրբյան

40 «Արարատ», 1912, թ. 2, էջ 102:
41 «Արարատ», 1912, թ. 4, էջ 294:
42 Տե՛ս «Արարատ», 1913, թ. 8-9, էջ 693:
43 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 265, թ. 13:

փառաբանություն: Թագավորի աղոթք: Հավատի հանգանակը եւ նրա համառոտ բացատրությունը: Տիեզերական Ժողովներ՝ Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի:

Ընդհանուր եւ Հայ Եկեղեցու պատմություն. Հալածանք քրիստոնեության դեմ: Ս. Ստեփանոս: Սավուղի դարձը: Պողոս առաքյալի քարոզչությունները: Հայաստանի առաջին լուսավորիչներ՝ Ս. Թադեոս եւ Ս Բարդուղիմեոս առաքյալները, նրանց գործունեությունը եւ նահատակությունը: Ս, Գրիգոր Լուսավորիչ եւ նրա պատմությունը:

Կարգ ասփվածպաշտության. Եկեղեցու նշանակությունը: Յոթ խորհուրդներ: Նվիրապետություն եւ նրա աստիճանները: Ս. Պատարագի խորհուրդը: Նաեւ ցանկալի էր, որ նորադարձները իմանային նաեւ հայերեն, գոնե թեթեւ գրել եւ կարդալ[44]:

1914 թ. վերջին Հայ Եկեղեցու ծեսով մկրտվեցին Շամախիի թեմի՝ Բալաջարում ապրող հրեուհի Գերշենֆելդը, Շուշիի բնակչուհի Մարիա Պարադիզը:

1915 թ. Հայ Եկեղեցու գիրկն անցան Վաղարշապատի բնակչուհի Պիրել Զեյդմանը, Խարկովի բնակչուհի Ռիվկա Գուրեւիչը:

1916 թ. հունվարի 29-ին թ. 40 հայտարարությամբ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը Ս. էջմիածնի սինոդին առաջարկեց Գեւորգ վարդապետ Չորեքչյանի կողմից կազմված ծրագիրը: Նույն թվականի մարտի 26-ին այդ հրահանգ-ծրագիրը հաստատվեց Վեհափառ Հայրապետի կողմից եւ ապրիլի 1-ին թ. 766 մակագրությամբ հանձնվեց Սինոդին ի գործադրություն[45:]

1916 թ. Հայ Եկեղեցու ծոցն անցան Սոչիի բնակչուհի Օլգա Զեյդմանը, Տոբոլսկից՝ Պեսե Ռիսլերը, Թիֆլիսից՝ Դվոյրա Գուլկոն, Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ղարաքիլիսայի վերաբնակչուհի Գուրա Խայկինան, ինչպես նաեւ Դվոյրա Ռուբինան եւ Վլադիմիր Վասիլեւիչ Թառուցեւիչը:

Թիֆլիսի բնակիչ, Նովոռոսիյսկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Իսիդոր Այզբերգը պատճառաբանություն չգտնելով՝ գրեց. «Իմ առողջական վիճակի ծանր լինելը ստիպում է ինձ խնդրել Ձեզ հրամայել արագացնել իմ՝ Հայ լուսավորչական Եկեղեցու ծոցն անցնելը»: Նա եւս ընդունվեց Հայ Առաքելական Եկեղեցու գիրկը[46:]

1916 թ. մայիսի 31-ին Կովկասի փոխարքայի դիվանը բավարարեց հրեա Մոիսեյ Սեյդմանի համանման խնդրանքը:

1916 թ. դեկտեմբերի 19-ին բաքվեցի հրեա Մոիսեյ Յանկելի Կուրովերը «յուրացնելով Հայ լուսավորչական Եկեղեցու կանոնները»՝ խնդրում էր թույլատրել իրեն քրիստոնեություն ընդունել «ներքին համոզմունքով»: 1917 թ. մայիսի 23-ին նրա խնդրանքը բավարարվեց[47:]

1917 թ. Հովհաննես քահանա Զուբարյանը Ս. էջմիածնին հայտնում էր, որ Զիլբերմանը ուզում է ընդունել Հայ Եկեղեցու դավանություն: Նա իմանում էր միայն

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 301, թ. 1:
45 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 272, թ. 5-7:
46 ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ.323, թ.4-8:
47 ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ.320, թ. 2:

«Հայր մեր» եւ հարցնում էր, թե հարկավո՞ր է իրեն լուրջ քննության ենթարկել: Նույնը հարցնում էր նաեւ ուրիշ հրեայի՝ Իոսիֆ Կոնիի մասին[48]:

Նույն՝ 1917 թ. Հայ Եկեղեցու գիրկն անցան Ռեբեկա Աբրամովիչը, Աննա Յուզեֆովիչը, էսթեր Գինզբուրգը՝ Բաքվից: Սիցիլիա Շկաբլեւսկայան՝ Ասպրախանից, Իրինա Կրեյնեսը՝ Պետրոգրադից, Քսենիա Պոգինան եւ շատ-շատ ուրիշներ: Էսթեր Ավաժանսկայան՝ Պետրովսկից էջմիածնի սինոդին գրում էր. «Ներքին համոզմամբ վերջնականորեն եւ անվերադարձ ես որոշել եմ քրիստոնեություն ընդունել: Քահանան սրուգել է իմ գիտելիքները եւ որոշել է, որ ես պատրաստ եմ քննություն հանձնելու, եւ ընդհանրապես ես ինձ քրիստոնյա եմ համարում»[49]:

Հայ Եկեղեցին միշտ բարյացակամ էր վերաբերվում հրեաներին, եւ 1916 թ. հունիսի 7-ին Թիֆլիսում Վեհափառի հետ հանդիպելիս հրեաների ռաբբի Մենդել Մարկոսը հայտնեց նրան իր շնորհակալությունը[50]:

Հուդայությունից Հայ Առաքելական Եկեղեցի անցումը վերջացավ Ռուսաստանում միապետության տապալումից եւ ժամանակավոր կառավարության կողմից 1917 թ. հուլիսի 20-ին ընդունված խղճի ազատության մասին որոշումից հետո, ուր մասնավորապես ասվում էր, որ քաղաքացիական եւ քաղաքական իրավունքներից օգտվելը կախված չէ հավատի պատկանելությունից, ոչ ոք չի կարող հետապնդվել, եւ ոչ մեկի իրավունքներն ու համոզմունքները չեն կարող սահմանափակվել հավատի պատճառով[51]:

Վերջին հրեան, որը ցանկացավ անցնել Հայ Եկեղեցու գիրկը եւ մկրտվել Հայ Եկեղեցու ծեսով, ֆելդշեր Ախարդ Սամոյլովիչն էր՝ Ռոստովից, որը, 1918թ. օգոստոսի 15-ին դիմեց Նոր Նախիջեւանի հոգեւոր կառավարությանը[52]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ վստահաբար կարելի է արձանագրել հետեւյալը. գտնվելով միապետական դաժան վարչակարգի եւ կովկասյան ցարական վարչակազմի ճնշման տակ, Հայ Եկեղեցին բարեհաճ վերաբերմունք է ունեցել բոլոր ազգերի եւ հավատքների, այդ թվում նաեւ Ռուսաստանում բնակվող հրեաների նկատմամբ: Իր գիրկն ընդունելով հուդայադավան հրեաներին, նա ուշադրություն չդարձրեց ոչ դավանական, եւ ոչ առաջացած կրոնական խնդիրների վրա՝ խստագույնս չքննելով յուրաքանչյուր հրեայի՝ հավատքը փոխելու ժամանակ: Մայր Աթոռը հստակ գիտակցում էր, որ Հայ Եկեղեցու հավատափոխ հրեաների մի զգալի զանգվածը, երբ հանդարտվի հակահրեական ալիքը, վերադառնալու է իր նախկին հավատքին:

48 Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթապանակ 134, վավ. 142:
49 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 289, թ.5:
50 Տե՛ս «Արարատ», 1916, թ. 7-8, էջ 503:
51 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 327, թ. 4:
52 ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 2754, թ. 7: